


Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ



Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:


Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


AI պարտքային ռիսկը ուշադրության կենտրոնում է:



ԱՄՆ բաժնետոմսերը ապրում են իրենց պատմության ամենաուժեղ տասնամյակներից մեկը:



Շուկաները շարժվում են դեպի 24/7 առևտուր:




Պարտատոմսերի շուկան շարունակում է մնալ ճնշման տակ:





Նախորդ շաբաթ S&P500-ը նվազեց 1.37%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը նվազեց 2.41%-ով




Նախորդ շաբաթ Dow Jones-ը նվազեց 0.77%-ով

Նախորդ շաբաթ Russell 2000-ը նվազեց 1.68%-ով




ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին բացասական եկամտաբերություն: S&P 500-ը և Nasdaq-ը գրանցեցին հուլիսի վերջից ի վեր առաջին շաբաթական անկումը, իսկ Dow Jones-ը՝ մարտից ի վեր ամենավատ շաբաթը: Տեխնոլոգիական ընկերությունների բարձր պարտքային բեռի վերաբերյալ մտահոգությունները ճնշում գործադրեցին բաժնետոմսերի վրա: Շուկայի տրամադրությունների վրա ազդեցին նաև ԱՄՆ սպառողի վերաբերյալ մտահոգությունները, Walmart-ի վաճառքների անսպասելի անկումը ցույց տվեց, որ սպառողական պահանջարկը կարող է թուլանալ, հատկապես երբ բենզինի գները գերազանցում են 4 դոլարը:



Բարձր եկամտաբերությունն ու նավթի գները ճնշում են շուկաներին

Նավթի գների աճի ֆոնին էներգետիկ ոլորտը զգալիորեն աճեց, սակայն շաբաթվա լավագույն արդյունքը գրանցեց առողջապահության ոլորտը՝ հիմնականում Moderna-ի (MRNA) կտրուկ աճի շնորհիվ: Արդյունաբերական և տեխնոլոգիա-կան ոլորտները, հակա-ռակը, մնացին շուկայի թույլ հատվածում:



AI պարտքային ռիսկեր կրկին ուշադրության կենտրոնում է


Broadcom-ի CDS-ների սարեդը կտրուկ ընդլայնվեց՝ հասնելով ռեկորդային մակարդակի՝ ներդրողներին հիշեցնելով AI ենթակառուց-վածքների ֆինանսավորման հետ կապված աճող վարկային ռիսկերի մասին: Սա ընդգծում է, որ AI բումի հետևում առկա մեծածավալ պարտքային ֆինանսավորումը կարող է դառնալ շուկայի լրացուցիչ ռիսկի աղբյուր:



AI սեգմենտները ետ են մնում շուկայից

Օգոստոսի 14-ից ի վեր S&P 500-ը գրեթե անփոփոխ է (+0.28%), մինչդեռ AI-ի հիմնական սեգ-մենտները նվազել են՝ AI Semis -4.71%, Data Centers -8.47%, Optical Networking -11.45%:

Սա խոսում է այն մասին, որ ներդրողները վերագնահատում են AI ոլորտի սպասումները և ենթակառուցվածքային ներդրումների հետ կապված ռիսկերը: Ֆինանսավորման թանկացումը լրացուցիչ ճնշում է ստեղծում հատկապես AI ենթակառուցվածքի նկատմամբ զգայուն ընկերությունների համար:



Walmart (WMT)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում գրանցել է մոտ 187.9 մլրդ դոլարի հասույթ, որը տարեկան կտրվածքով աճել է մոտ 5.9%-ով՝ հիմնականում էլեկտրոնային առևտրի, ԱՄՆ շուկայում կայուն վաճառքների և միջազգային բիզնեսի աճի շնորհիվ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 0.81 դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով մոտ 19%-ով: Սակայն արդյունքները շուկայի մասնակիցների սպասումները չարդարացրեց և ընկերության բաժնետոմսերը նվազեցին ավելի քան 9%-ով:



Home Depot (HD)-ի հասույթը 2026 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է մոտ 47.9 մլրդ դոլարի, որը տարեկան կտրվածքով աճել է 5.7%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է (EPS) 4.92 դոլար՝ նախորդ տարվա 4.68 դոլարի համեմատ, իսկ համադրելի վաճառքներն աճել են 1.7%-ով: Արդյունքները ցույց են տալիս պահանջարկի աստիճանական բարելավում հատկապես խոշոր հաճախորդների շրջանում, թեև բնակարանային շուկայի և բարձր ֆինանսավորման ծախսերի ազդեցությունը շարունակում է սահմանափակել խոշոր վերանորոգման նախագծերի ակտիվությունը:




Alibaba Group (BABA)-ը երկրորդ եռամսյակում գրանցել է մոտ 269.0 մլրդ յուանի (39.6 մլրդ դոլարի) հասույթ, որը տարեկան կտրվածքով աճել է 9%-ով: Աճին հիմնականում նպաստել է ամպային ծառայությունների և արհեստական բանականության ուղղության արագ զարգացումը: Միաժամանակ ընկերությունը շարունակում է զգալի ներդրումներ կատարել AI ենթակառուցվածքներում և տեխնոլոգիաներում, ինչի արդյունքում շահութաբերությունը մնում է ճնշման տակ:

Target (TGT)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում գրանցել է մոտ 26.5 մլրդ դոլարի հասույթ, որը տարեկան կտրվածքով աճել է 5.3%-ով, իսկ համադրելի վաճառքներն աճել են 3.8%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 4.11 դոլար՝ նախորդ տարվա 2.05 դոլարի համեմատ: EPS-ի զգալի աճին, սակայն նպաստել է մոտ 994 մլն դոլարի նախահարկային մաքսատուրքի վերադարձը, որը մեկ բաժնետոմսի հաշվով ավելացրել է մոտ 1.65 դոլար:



Պարտատոմսերի շուկաները շարունակում են ճնշման տակ մնալ

ԱՄՆ-ի 30-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը կարճ ժամանակով գերազանցեց 5.3%-ը՝ հասնելով 2007-ից ի վեր ամենաբարձր մակարդակին, իսկ 10-ամյան մոտեցավ 4.7%-ին: Վաճառքի ակտիվ տարածվեց նաև Ճապոնիայի և Գերմանիայի շուկաներում: Կառավարությունների աջակցող քայլերը թուլացրին միայն կարճաժամկետ ճնշումը՝ ցույց տալով, որ երկարաժամկետ եկամտաբերությունների աճի ռիսկը պահպանվում է:



Ճապոնիայի պետական պարտատոմսերի եկամտաբերությունը՝ պատմական մակարդակում է

Ճապոնիայի 10-ամյա պետական պարտատոմսերի եկամտաբերությունը գերազանցեց 2.95%-ը՝ հասնելով 1990-ականներից ի վեր ամենաբարձր մակարդակին: Գնաճի և տնտեսական ակտիվության կայունացումը մեծացրել են սպասումները, որ Ճապոնիայի Բանկը կարող է շարունակել դրամավարկային քաղաքականության խստացումը: Իսկ ներքին շուկայում բարձր եկամտաբերությունը կարող է նվազեցնել ճապոնացի ներդրողների հետաքրքրությունը ԱՄՆ-ի և Եվրոպայի պետական պարտատոմսերի նկատմամբ՝ լրացուցիչ ճնշում գործադրելով դրանց վրա:



Դոլարը շաբաթվա ընթացքում նվազեց գրեթե 1%-ով, չնայած ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերության աճին: Սա կարևոր ազդանշան է, քանի որ սովորաբար բարձր եկամտաբերությունը աջակցում է դոլարի ամրապնդմանը: Այս ավելի շատ ընկալել որպես հարկաբյուջետային ռիսկի և ԱՄՆ ակտիվների նկատմամբ վստահության խնդիր է:

Ոսկու գինը բարձրացել է 4,600 դոլարից վեր մեկ ունցիայի դիմաց՝ գրանցելով աճի երրորդ անընդմեջ շաբաթը և պահպանվելով 200-օրյա շարժվող միջինից բարձր: Աճին նպաստել են դոլարի թուլացումը, Մերձավոր Արևելքի լարվածությունը, գնաճային ռիսկերը և ԱՄՆ պետական պարտատոմսերի նկատմամբ վստահության նվազումը:




Մետաղների շուկայում պատկերը խառը է

Արժաթն ու պլատինը շաբաթվա ընթացքում առաջատարներից էին, մինչդեռ պղինձը նվազեց՝ պահեստներում ֆիզիկական մատակարարումների աճի ֆոնին:



Նավթի գները շարունակում են աճել

Գների աճին նպաստել են ԱՄՆ-ի հարաբերությունների սրացումը, Մերձավոր Արևելքի մատակարարումների շուրջ անորոշությունը և Հորմուզի նեղուցով հոսքերի վերաբերյալ մտահոգությունները: Միևնույն ժամանակ, շարունակում է խորանալ վերամշակված նավթամթերքի, հատկապես դիզելի դեֆիցիտը՝ Մերձավոր Արևելքից մատակարարումների կրճատման և ռուսական նավթավերամշակման գործարանների վրա Ուկրաինայի հարձակումների ֆոնին:



Bitcoin-ը գրանցեց 2024 թվականից ի վեր լավագույն շաբաթը:
Bitcoin-ի գինը նախորդ շաբաթ աճեց ավելի քան 20%-ով: Սա
2024 թվականից ի վեր ամենաուժեղ շաբաթական աճն է:



Ethereum-ը աճեց մոտ 30%-ով և հատեց 2400 դոլարի
մակարդակը, այս դինամիկան խոսում է կրիպտոարժույթների
նկատմամբ պահանջարկի կտրուկ վերականգնման մասին:




Շուկաները շարժվում են դեպի 24/7 առևտուր

Տոկենիզացված բաժնետոմսերի առևտրի ծավալը 2026-ին հասել է 9 մլրդ դոլարի՝ սահմանելով նոր ռեկորդ: Տարեկան կտրվածքով աճը կազմել է 800%, իսկ եռամսյակային կտրվածքով՝ 207%:

Պահանջարկը հատկապես բարձր է արագ աճող՝ հիշողության և պահեստավորման ոլորտի բաժնետոմսերի նկատմամբ, որոնք հասանելի են 24/7: Այս միտումը համընկնում է Nasdaq-ի՝ առևտրային ժամերը մինչև օրական 23 ժամ, շաբաթական 5 օր ընդլայնելու ծրագրերի հետ:


Tokenized Equities - Total Onchain Trading Volume



Source: Blockworks.com | Onchain volume specific to Solana, Robinhood, Base, Gnosis, Ethereum, HyperCore, Avalanche


Աշխարհը շարունակում է ակտիվորեն գնել ԱՄՆ բաժնետոմսեր

Հունիսին ԱՄՆ-ից դուրս գտնվող օտարերկրյա ներդրող-ները գնել են ռեկորդային 181.4 մլրդ դոլարի ամերիկյան բաժնետոմսեր: Դրանցից 144.7 մլրդ դոլարը բաժին է ընկել մասնավոր ներդրողներին՝ տարեկանացված ցուցանիշը հասցնելով 1.74 տրլն դոլարի, որը պատմական առավելագույնն է: Մասնավոր ներդրող-ները կազմել են ընդհանուր օտարերկրյա գնումների մոտ 80%-ը, ինչը վկայում է ԱՄՆ բաժնետոմսերի նկատմամբ աննախադեպ բարձր հետաքրքրության մասին:



ԱՄՆ բաժնետոմսերը ապրում են իրենց պատմության ամենաուժեղ տասնամյակ-ներից մեկը

S&P 500-ը 2019-ի վերջից ի վեր աճել է 141%-ով: Եթե այս տեմպը պահպանվի, այս տասնամյակը ինդեքսը կարող է ավարտել մոտ 277% աճով: Դա կդառնա պատմության երկրորդ լավագույն տասնամյակը՝ զիջելով միայն 1989-1999 թթ. Dot-Com բումի ժամանակ գրանցված 316% աճին և գերազանցելով 1949-1959 թթ. հետպատերազմյան բումի 257% արդյունքը:



Source: LSEG Datastream and © Yardeni Research. Standard & Poors.
*January 1921


ԱՄՆ-ի ֆինանսական պայմանները երբեք այսքան թուլացած չեն եղել

Bloomberg-ի ֆինանսական պայմանների ինդեքսը հասել է իր 35-ամյա պատմության ամենաթույլ մակարդակին՝ գերազանցելով 2021թ-ի և dot-com-ի բումի ցուցանիշները: Սա նշանակում է, որ շուկաներում իրացվելիությունն ու ֆինանսավորման հասանելիությունը գրեթե ռեկորդային բարձր մակարդակի վրա են՝ աջակցելով բաժնետոմսերին, ոսկուն և վարկային շուկային: Սակայն նման պայմանները երկար չեն պահպանվում, դրանց խստացման դեպքում առաջինը ճնշման տակ կհայտնվեն ամենաբարձր լծակով գործարքները՝ հատկապես AI-ը և վարկային շուկան:

Summertime, and Conditions Are Easy

US finance is the easiest to come by since at least 1990

— Bloomberg US Financial Conditions Index



X @KURTSALTRICHTER


Source: Bloomberg

Սա 2026-ի ամենամուղորեցնող գրաֆիկներից մեկն է

Օտարերկրյա կառավարությունների՝ ԱՄՆ պետական պարտատոմսերի մասնաբաժինը 2008-ի 40.7%-ից նվազել է մինչև 12.2%, բայց դա չի նշանակում, որ նրանք զանգվածաբար վաճառում են: Նրանց պահուստները շարունակում են կազմել մոտ 4 տրիլիար, պարզապես ԱՄՆ պետական պարտքն ավելի արագ է աճել: Խնդիրն այն է, որ օտարերկրյա գնորդները չեն հասցնում աճող պարտքի տեմպին, ուստի դրա ավելի մեծ մասը պետք է կլանեն մասնավոր ներդրողները՝ պահանջելով ավելի բարձր եկամտաբերություն:


Share of U.S. Treasuries held by foreign official entities

Monthly; December 2000 to June 2026



Data: FactSet, U.S. Treasury Department; Chart: Matt Phillips/Axios

Չինաստանն վաճառել է ԱՄՆ պարտատոմսերի պորտֆելի կեսից ավելին: Ճապոնիան տասնամյակից ավելի է պահպանում է կայուն հաշվեկշիռ, չնայած վերջերս կրճատել է իր պորտֆելը: Հնարավոր է՝ ԱՄՆ ֆինանսների նախարարությունը որոշել է օգնել Ճապոնիայի բանկին կայունացնել իենը, որպեսզի Ճապոնիայի կառավարությունը չվաճառի ԱՄՆ պարտքը՝ իենի արժեզրկումը կանխելու համար: Միևնույն ժամանակ, Միացյալ Թագավորությունը չի դադարեցրել ԱՄՆ պարտատոմսեր գնելը, այս տեմպի պահպանման դեպքում այն կարող է դառնալ միջազգային ամենամեծ պորտֆել ունեցող երկիրը:



Տասնամյակներ շարունակ ԱՄՆ նախագահները խոստացել են կրճատել դեֆիցիտն ու պետական պարտքը

Քարթեր (1978) - «Կառավարությունը չի կարող շարունակել ծախսել ավելին, քան ստանում է»

Ռեյգան (1981) - «Տասնամյակներ շարունակ կուտակել ենք դեֆիցիտ՝ գրավադրելով մեր և մեր երեխաների ապագան»:

Բուշ Ավագ (1989) - «Մենք պետք է վերահսկենք բյուջեի դեֆիցիտը»:

Բիլ Քլինթոն (1993) - «Մենք պետք է կարգի բերենք մեր ֆինանսական համակարգը»:

Բուշ Կրտսեր (2001) - «Մենք կարող ենք մարել ազգային պարտքի մեծ մասը»:

Օբամա (2010) - «Կառավարությունը պետք է սեղմի գոտիները»:

Թրամփ (2016) - «Մենք կսկսենք հավասարակշռել բյուջեն և մարել պարտքը»:


Բայդեն (2022) - «Իմ ծրագիրը կնվազեցնի դեֆիցիտը»:

Թրամփ (2024) — «Մենք կհավասարակշռենք դաշնային բյուջեն»:

US National Debt at End of Each Presidency, in \$Trillions

(Data via Treasury.gov: January 1981 - August 2026)

*As of 8/18/26



Այս շաբաթ 105, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երկրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են NVIDIA Corporation (NVDA), Royal Bank of Canada (RY), Marvell Technology (MRVL), Salesforce (CRM), PDD Holdings (PDD), HEICO Corporation (HEI), Synopsys (SNPS), Autodesk (ADSK) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	↓ Market Cap	P/E	Price
1	 NVDA	NVIDIA Corp	Technology	Semiconductors	USA	5247.77B	33.21	216.85
2	 RY	Royal Bank Of Canada	Financial	Banks - Diversified	Canada	284.54B	18.41	205.21
3	 MRVL	Marvell Technology Inc	Technology	Semiconductors	USA	219.83B	85.77	251.01
4	 TD	Toronto Dominion Bank	Financial	Banks - Diversified	Canada	197.42B	19.02	116.85
5	 CRWD	CrowdStrike Holdings Inc	Technology	Software - Infrastructure	USA	193.82B	-	190.34
6	 CRM	Salesforce Inc	Technology	Software - Application	USA	168.25B	23.78	205.43
7	 PDD	PDD Holdings Inc ADR	Consumer Cyclical	Internet Retail	China	127.42B	9.76	89.52
8	 BMO	Bank of Montreal	Financial	Banks - Diversified	Canada	122.10B	18.31	172.90
9	 CM	Canadian Imperial Bank Of Commerce	Financial	Banks - Diversified	Canada	107.20B	15.83	115.69
10	 BNS	Bank Of Nova Scotia	Financial	Banks - Diversified	Canada	106.54B	16.49	86.44
11	 INTU	Intuit Inc	Technology	Software - Application	USA	98.98B	21.91	361.87
12	 SNPS	Synopsys Inc	Technology	Software - Infrastructure	USA	76.19B	92.06	397.92
13	 ADSK	Autodesk Inc	Technology	Software - Application	USA	52.97B	36.68	251.02
14	 WDAY	Workday Inc	Technology	Software - Application	USA	48.74B	61.56	197.32
15	 WDS	Woodside Energy Group Ltd ADR	Energy	Oil & Gas E&P	Australia	45.73B	16.96	24.12
16	 A	Agilent Technologies Inc	Healthcare	Diagnostics & Research	USA	44.14B	31.39	156.30
17	 HEI	Heico Corp	Industrials	Aerospace & Defense	USA	40.92B	62.61	350.58
18	 VEEV	Veeva Systems Inc	Healthcare	Health Information Services	USA	40.70B	44.61	250.53
19	 GFI	Gold Fields Ltd ADR	Basic Materials	Gold	South Africa	40.68B	11.50	45.45
20	 P	Everpure Inc	Technology	Computer Hardware	USA	36.56B	167.19	109.98

Monday, Aug. 24

No events scheduled

Tuesday, Aug. 25

9:00 AM	S&P Cotality Case-Shiller Home Px Index	Jun.	-	-	0.9%
10:00 AM	New Home Sales	Jul.	-	-	628K
10:00 AM	Conference Bd - Consumer Confidence	Aug.	-	-	90.8

Wednesday, Aug. 26

8:30 AM	Durable Goods	Jul.	-	-	0.3%
8:30 AM	2nd estimate GDP	2Q	-	-	1.5%
8:30 AM	Personal Income, M/M%	Jul.	-	-	0.2%
8:30 AM	Consumer Spending, M/M%	Jul.	-	-	0.3%
8:30 AM	PCE Price Idx, M/M%	Jul.	-	-	-0.1%
8:30 AM	PCE Price Idx, Y/Y%	Jul.	-	-	3.7%
8:30 AM	PCE Core Price Idx, M/M%	Jul.	-	-	0.1%
8:30 AM	PCE Core Price Idx, Y/Y%	Jul.	-	-	3.3%

Thursday, Aug. 27

8:30 AM	Weekly Jobless Claims	Aug. 22	-	-	206K
8:30 AM	Advance U.S. Trade Balance in Goods	Jul.	-	-	-101.5B
8:30 AM	Wholesale Inventories	Jul.	-	-	0.3%
8:30 AM	Retail Inventories	Jul.	-	-	0%
11:00 AM	Kansas City Fed Survey	Aug.	-	-	17

Friday, Aug. 28

9:45 AM	Chicago Business Barometer - ISM- Chicago Business Survey - Chicago PMI	Aug.	-	-	57.6
10:00 AM	U. Michigan Final Consumer Survey	Aug.	-	-	55.2

